պահանջում գիւղացիներից. գիւղատէրը՝ Միրզա Մէհդին Թելադրում է չվճարել, գիւղացիները համաձայնում են, դրա վրայ Սալար Մասուդն և Աղամը գիշերը 800 զինուած ձիաւորներով մտնում են գիւղ և ամբողջապէս հարբստահարելուց յետոյ գիւղացիութեան՝ սպանում են 7 հոգու. այրում եկեղեցին, դպրոցը և 15-ից աւելի տներ. անպատուում կանանց ու աղջիկներին։ Գիւղատէրը չի օգնում, գիւղացիներն էլ ինքնապաշտպանութեան միջոցներից միանգամայն զուրկ լինելով՝ չեն կարողանում աւազակներից պաշտպանուել։ Այսպիսով ստեղծուում է մի ողբերգական դրութիւն։ Եւ բնակիչները մատնուած ծայրայեղ թշուառութեան՝ գաղթում են Նոր—Ջուղա, ուր Ս. Ամենափրկչեան վանքում մի որոշ ժամանակ ապաստան գտնելուց յետոյ, նորից գիւղ են վերադառնում։

Այնուհետև գիւղն ենթարկուում է անվերջ հարստահարութիւնների. 1917 թուին Զարդամ, Մահմուտ և Մամթաղի (Զրաղ-Ալի խանի թոռները) սիստեմատիկ կերպով հարբստահարում են խեղճ գիւղացիութեան. նախ գալիս է գիւղ Մամթաղին հետևեալ պատճառով. սրա մարդկանցից մէկը գիշերով հայի արտից հունձքը գողանալիս սպանուում է, որի համար Մամթաղին 1000 թուման արիւնագին է պահանջում գիւղացիներից. նրանք մերժում են վճարել, դրա վրայ նա 200 զինուած ձիաւորներով գիշերը մտնում է գիւղ և 1000 թումանի վնաս է տալիս, ապա 1000 թուման էլ փող առնելով՝ հեռանում է գիւղից։ Այնուհետև ամառը գալիս է Ջաֆար Ղուլին և բռնութեամբ առնում է գիւղացիներից 48 բեռ յարդ և եօնջա, բայց նա դրանով չի բաւականանում, ձմեռը նորից մտնում է գիւղ և առնում 20 բեռ յարդ և եօնջա ու երեք հատ էլ մատակ թողնում գիւղը, որ գիւղացիներն իրենց ծախսով պահեն։ Այնուհետև գարնան 30 ձիաւորով նորից գալիս է գիւղ և հինգ օր գիւղացիների ծախսով ապրում. հեռանալիս առնում է 75 լիտր ալիւր և 75 թուման փող։